

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ «ՎԱՐԴԳԵՍ ՄԱՆԿԱՆ» ՎԻՊԱԿԱՆ
ՀԱՏՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Շ. ՄԱՅԱԿԱՆՅԱՆ

Մովսես Խորենացին, ի շարս բանահյուսական գոհարների, փրկել է նաև «Հատուած գնացեալ Վարդգէս...» սկզբնատողով մի զրույց¹։ Մասնագետները վաղուց են նկատել այդ մեծարժեք բեկորը և անդրադարձել նրան։ Հայտնված կարծիքները կարելի է բաժանել երեք խմբի։

ա) Երբ մասնագետները, հավատ րնծայելով Մովսես Խորենացուն, այս զրույցը դիտում են որպես մ. թ. ա. VI դարի առաջին կեսի պատմական իրադարձությունների զիջաբանական արձագանք։ Այս կարծիքին են եղել Մ. Չամչյանը², Ղ. Ինճիճյանը³, Մ. Էմինը⁴, Ղ. Ալիշանը⁵ և ուրիշներ։

բ) Երբ այդ զրույցը համարվում է կասկածելի և մերժվում։ Այս կարծիքը արտահայտող Գ. Խալաթյանցի⁶ դեմ հանդես եկավ Մ. Աբեղյանը⁷։

գ) Երբ մասնագետները վստահում են քննվող զրույցին, սակայն նրա ժամանակը մ. թ. ա. VI դարի առաջին կեսից ետ են բերում մ. թ. ա. III դարի վերջերս։ Այս կարծիքի հիմնադիրը հանդիսացավ Մ. Աբեղյանը նախ՝ Գ. Խալաթյանցին տված պատասխանում, ապա՝ հին գրականության ամբողջացվող պատմությունը շարադրելիս⁸։ Այժմ իշխում է այդ կարծիքը⁹։

Մեր որոնումները համոզում են, որ հարցին համեմատաբար ճիշտ են մոտեցել առաջին կետում հիշված մասնագետները, որոնք, սակայն, չեն դիմել «Հատուած գնացեալ...»-ի պատշաճ քննությանը, իսկ առանձին դեպքերում ոչ ընդունելի ենթադրություններ են արել։ Իրերի ներկա զրույցյան մեջ մնում է նորովի արժեքավորել մեզ հետաքրքրող զրույցն ու նրա մասին Մովսես Խորենացու տված մյուս տեղեկությունները¹⁰։

1 Մովսես Խորենացի, Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 199—200։

2 Մ. Չամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 101—102, հատ. Գ, 1786, էջ 187 (ցանկ-ձանոթագրություններ)։

3 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց. Վենետիկ, 1822, էջ 471։

4 Մ. Էմին, Մովսես Խորենացի և հին հայկ. վէպը, Թիֆլիս, 1887, էջ 69։

5 Ղ. Ալիշան, Քաղաքական աշխարհագրութիւն, Վենետիկ, 1853, էջ 65։ Նույնի՝ Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 204։

6 Г. Халатянц, Армянский эпос, I, М., 1896, էջ 332—337։

7 Մ. Աբեղյան, Հայ ժողովրդական առասպելներ..., Վաղարշապատ, 1899, էջ 500—568։

8 Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 129—130, հատ. Գ, 1968, էջ 74—75։

9 Տե՛ս, օրինակ, Հ. Ժամկոչյան, Ա. Արրահամյան, Ս. Մելիք-Բախչյան, Հայ ժողովրդի պատմություն, հատ. Ա, Երևան, 1963, էջ 153—154։

10 Ավելորդ չէր լինի հիշեցնել, որ սույն հոդվածում քննվող փաստերը լինելով պատմական և զիջաբանական հեռավոր հուշերի արձագանքներ, ներկայացվում են որպես այդպիսիք և

հորանալով այս հարցին Մ. Արեղյանի տված մեկնաբանությունների մեջ, նկատենք հետևյալը. Մովսես հորենացին, խոսելով Վաղարշ I թագավորի մասին, հիշում է նրա գործունեությունը՝ կապված նաև Վաղարշապատի հետ: Այդտեղ նա մեջ է բերում «Հատուած գնացեալ Վարդգէս...» գրույցը՝ ցույց տալու, թե ինչպես Վաղարշապատը հիմնվել է դեռևս Երվանդ I-ի ժամանակ՝ նրա փեսայի՝ Վարդգես Մանկան կողմից: Պատմահայրը չի մոռանում նշել նաև այդ քաղաքի բարգավաճման գործում մեծ դեր խաղացած Տիգրան II-ին (Միջինին): Այս ձևով նա պատմում է ժամանակով միմյանցից հետո գտնվող մի քանի ղեկաբեր, որպեսզի նրանց օգնությամբ ամբողջացրած իրենի Վաղարշապատի պատմության վաղ շրջանի հիմնական պատկերը: Այդտեղ նա բոլորովին չի հիշատակել Տիգրան I-ի անունը, չնայած որ նրան այնքան ջերմորեն է ներկայացրել նախորդ գրքում¹¹: Բայց Մ. Արեղյանը ենթադրել է, թե Մովսես հորենացին, Վաղարշապատի մասին խոսելիս, նկատի է ունեցել ոչ թե Տիգրան II-ին, այլ Տիգրան I-ին: Ըստ այդմ էլ Ս. Արեղյանը կարծել է, թե գրույցը վերաբերում է Տիգրան Երկրորդի և Երվանդ Վերջինի ժամանակներին: Այս տեսակետն էլ մտավ գիտական շրջանառության մեջ:

Մեզ թվում է, որ քննարկվող գրույցը պետք է վերստին դիտել որպես մ. թ. ա. VI դարի մասին խոսող վկայություն: Այս հարցը լուծելու նպատակով նախ դիմենք սկզբնաղբյուրին՝ Մովսես հորենացուն: Նա Վաղարշ I-ի վերաբերյալ գրում է. «Սա պատեաց պարսպաւ և ղհօր աւանն Վարդգէսի, որ ի վերայ Քասաղ գետոյ, գորմէ յառասպելս ասեն»:

Հատուած գնացեալ Վարդգէս,
Մանուկն ի Տուհաց պառռէն.
Ձքասախ գետով եկեալ,
Նստաւ զՇրէշ բլրով.
ՁԱրտիմէդ քաղաքաւ,
Ձքասաղ գետով՝
Կռել կոփել զդունն
Երուանդայ արքայի¹²:

Մովսես հորենացին այստեղ նշված Երվանդի կապակցությամբ անմիջապես շարունակում է. «Այս Երուանդ՝ Առաջինն է, Սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ քոյրն կին տռեալ Վարդգէսի՝ շինեաց զաւանս զայս. յորում Տիգրան Միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ առաջնոյ գերութեան Հրէից, որ եղև քաղաքագիւղ վաճառօք: Այժմ այս Վաղարշ պատեաց պարսպաւ և անուանեաց Վաղարշապատ, որ և նոր քաղաք»¹³:

Ահա ամբողջ խոսքը: Ինչպես տեսնում ենք, հեղինակը, իրոք, հիշում է Վարդգեսավան-Վաղարշապատի հետ կապված տարբեր իրադարձություններ:

ա) Վարդգես Մանուկը դալիս է Քասաղ գետի ափին և Շրէշ բլուրի մոտ

նրանցից հանված եզրակացությունները չեն դիտվում որպես պատմական հավաստի ճշմարտություններ: Չմոռանալով, սակայն, որ փաստերի բացակայության պատճառով նման տեղեկությունները եզակի նշանակություն ունեն առհասարակ:

¹¹ Մովսես հորենացի, էջ 71—87:

¹² Տողատումը վերանայված է մեր կողմից:

¹³ Մովսես հորենացի, էջ 199—200:

դառնվող Արտիմեդ քաղաքը՝ Երվանդ արքայի (Սակավակյացի) քրոջն ուզելու, իսկ ամուսնությունից հետո Արտիմեդի հարևանությամբ հիմնում է իր անունով մի ավան (Վարդգեսավան)։ Ուստի դա պիտի տեղի ունեցած լիներ մ. թ. ա. «մաս 570—560 թթ.», երբ թաղավորում էր Երվանդ I Սակավակյացը¹⁴։

բ) Հետադաշում Տիգրան Միջինը (Երկրորդը) Վարդգեսավանում բնակեցնում է հրեա զերիներ՝ այն դարձնելով վաճառաշահ դյուղաքաղաք։ Դա պիտի տեղի ունեցած լիներ մ. թ. ա. 95—55 թթ. ընթացքում, երբ թաղավորում էր Տիգրան II-ը։

գ) Ավելի ուշ Վաղարշ I-ը պարսպապատում է Վարդգեսավանը, դարձնում քաղաք և վերանվանում Վաղարշապատ։ Դա էլ պիտի տեղի ունեցած լիներ 117—110 թթ., երբ թաղավորում էր Վաղարշ I-ը։

Ահա Մովսես Խորենացու ասածի ընդհանուր պատկերը՝ ուր ոչ մի հիշատակություն չկա Տիգրան I-ի մասին և բոլորովին էլ նա չփոթված չէ Տիգրան II-ի հետ։ Ուստի Մ. Արեղյանը, ճիշտ սկսելով իր հետևյալ նախադասությունը, մեր կարծիքով, ոչ ընդունելի եզրակացությամբ է ավարտում այն (խոսքը վերաբերում է ընդգծված մասին)։ «...ավանը շինվում է վիպական Մեծն Տիգրանի հոր ժամանակ, բայց Տիգրանն ևս մասնակից է լինում, բնակեցնելով այնտեղ հրեա զերիներ»¹⁵։ Ինչպես տեսանք, Մովսես Խորենացին խոսում է Տիգրան Միջինի (II-ի) մասին, իսկ Մ. Արեղյանն այդ նույն Տիգրանին դիտում է որպես Տիգրան Առաջին։ «Վարդգեսի ավանի առասպելի մեջ հիշված Տիգրանին մեր պատմագիրն սահմանափակում է պիտի տարբերվող վիպական Երվանդյան Տիգրանից և նույնացնելով իր Արշակունի Միջինի հետ, քանի որ իր պատմական ծանոթություններով Միջին Տիգրան Արշակունին արշավել Պաղեստին և հրեա զերիներ բերել»¹⁶։

Բայց մի՞թե հենց այդպես չի վարվել Մովսես Խորենացին, երբ գրել է. «Երում Տիգրան Միջին յԱրշակունեաց նստոյց զհասարակ սոռանոյ զերութեան Հրէից»։ Եվ միանգամայն ճիշտ է այս հարցում Խ. Խալաթյանը, նրա գրում է. «...историк наш сослался на еврейское пленение, поселенное здесь (իմա՝ Վարդգեսավանում) Тиграном Средним (Вторым)»¹⁷։

Ինչ Մովսես Խորենացին այդ հարցի վերաբերյալ որքան որոշակի և անշփոթելի պատկերացում է ունեցել, երևում է նաև Տիգրան II-ին (Միջինին) նվիրած Խրա հատուկ էջերից, որոնք սկսվում են «Յաղագս քաղաւորութեան Տիգրանայ Միջնոյ...» ևնթախորագրով¹⁸։ Այդտեղ ասված է, որ այդ Տիգրանը (Միջինը, Երկրորդը) «զգերութիւնն Հրէից նստուցեալ յԱրմաւիր և յաւանին Վարդգէսի որ ի վերայ Քասաղ զետոյ»¹⁹։

Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին Վարդգեսավան-Վաղարշապատի կապակցությամբ խոսելիս հիշում է միմիայն Տիգրան II-ին (Միջինին), իրավացիորեն նրան վերագրելով այնտեղ զերիներ տեղաբաշխելու

¹⁴ «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1971, էջ 222։

¹⁵ Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 129 (ընդգծումը մերն է—Ա. Մ.)։

¹⁶ նույն տեղում։

¹⁷ Г. Халатян, Армянский эпос. I, էջ 335—336։

¹⁸ Մովսես Խորենացի, էջ 127—135։

¹⁹ նույն տեղում, էջ 130։

գործը: Այդ առումով նա Տիգրան I-ի անունը չի տալիս և երկու Տիգրանների միմյանց հետ չի շփոթում:

Հետաքրքրական է, սակայն, որ Մ. Աբեղյանը վերջում հեռատեսորեն ավելացրել է այսպիսի միտք. «Այս առասպելի մեջ կարող է պահպանված լինել բուն պատմական հիշողություն ևս, թե Վարդգեսի ավանը շինված է Մեծն Տիգրանի և իր հոր օրով»²⁰:

Մասնագետները, սակայն, չեն խորացել այս մտքի մեջ և «Հաստատված գնացելով Վարդգես...» գրույցի բովանդակությունը մ. թ. ա. VI դարի առաջին կեսից ու Երվանդ I-ից պսկելով, ևս են բերել դեպի մ. թ. ա. III դարի վերջերն ու Երվանդ Վերջինը:

Ուստի վերստին Վարդգես Մանկան կապակցությամբ հիշված գրույցը պիտի դիտել որպես մ. թ. ա. VI դարի առաջին կեսին վերաբերող վկայություն, ինչպես հավաստում է փաստը, ինչպես համոզված է եղել Մովսես Խորենացին, և ինչպես ժամանակին ճիշտ նկատել են Մ. Զամչյանը, Ղ. Ինձիճյանը, Մ. Էմինը, Ղ. Ալիշանը և ուրիշներ:

Այսպես մոտենալով խնդրին, հնարավորություն ենք ունենում բացահայտելու, վերանայելու և առաջադրելու մի շարք հարցեր, որոնք կարևոր նշանակություն ունեն հայ ժողովրդի պատմության և առհասարակ հայագիտության համար: Օրինակ ի՞նչ գրույց-էպոսից է տոնված «Հաստատված գնացելով Վարդգես Մանուկ...» բեկորը, ո՞րն է եղել Երվանդ I-ի նստավայրը, ի՞նչ առնչություն ունեն միմյանց հետ Արտիմեդը, Վարդգեսավանը և Վաղարշապատը, որո՞նք են Երվանդ I-ի և Վարդգես Մանկան դիցաբանական դերերը, ո՞րն է Վարդգես Մանկան հայրենի Տուհաց գավառը և այլն:

Թե ի՞նչ է իրենից ներկայացրել այն ստեղծագործությունը, որից Մովսես Խորենացին մեջ է բերել «Հաստատված գնացելով Վարդգես...» փշրանքը, պարզված չէ: Սովորաբար այն համարվում է «Վարդգես Մանկան վեպ»²¹, որովհետև մեզ հայտնի տողերը նվիրված են Վարդգես Մանկան: Բայց արդյո՞ք ողջ ստեղծագործությունն է նվիրված եղել Վարդգեսին, դա խիստ կասկածելի է, մանավանդ որ Մովսես Խորենացին հենց նույն տեղում խոսում է Երվանդ I-ի՝ Սակավակյացի մասին՝ վկայելով, որ Վարդգես Մանուկը նրա դուռն է եկած եղել՝ նրա քրոջն ուղելու: Այսպիսով փաստորեն վեպի դործողության ոլորտի հետ է կապվում նաև Երվանդ արքան: Եվ քանի որ, ինչպես Մ. Աբեղյանն է ճիշտ նկատել, Մովսես Խորենացին այդ լրացուցիչ տեղեկությունները տվել է նույն ժառանգելի հիման վրա»²², ուստի առասպելի դործող անձինք են եղել և՛ Երվանդ I-ը, և՛ Վարդգես Մանուկը: Այդ հիման վրա էլ Մ. Աբեղյանը իրավացիորեն գրել է. «Ինչպես էլ լինի այս առասպելի սկիզբը, դա կապված լինելով Մեծն Տիգրանի հետ և իր վիպական հոր անունների հետ՝ պատկանել է վիպասանքի ցիկլին»²³:

Այստեղ փաստորեն վեպը կապված է համարվում Երվանդ I-ի և Տիգրան I-ի հետ: Այս նույն ոգով էլ այն թյուրիմացաբար առնչվել է նաև Երվանդ Վերջինի հետ. խոսքը «Հայ ժողովրդի պատմության» Ա հատորի այն

20 Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 130:

21 Նույն տեղում, էջ 126:

22 Նույն տեղում, էջ 129:

23 Նույն տեղում, էջ 130:

տողերի մասին է. ուր Երվանդ Վերջինին նվիրված զրույցների քննության ժամանակ ասվում է. «Վեպի այս ճյուղի հետ է կապվում նաև Վարդգես Մանկան վերաբերյալ զրույցը, թեև հորենացին այն առնչում է Երվանդ Մակավայացի հետ»²⁴։ Քանի որ արդեն սլարված է թյուրիմացությունը, ուստի Երվանդ Վերջինի համար հայտնված այս միտքը պիտի բնորոշել Երվանդ I-ի համար։

Այս բոլորից կարևորն այն է, որ «Հատուած գնացեալ Վարդգէս...» տողով սկսվող նմուշը կապվում է Երվանդ I-ին նվիրված վեպի հետ։ Ուստի նման դեպքում վերստին է Վարդգես Մանկանը նվիրված հատուկ վեպի մասին եղած պատկերացումը, և Վարդգես Մանուկը մնում է որպես վեպի երկրորդական զեմբերից մեկը՝ կենտրոնական տեղը զիջելով Երվանդ I-ին։

Այսպիսով հիմք ենք ունենում ոչ միայն համոզվելու, որ իրոք, Երվանդ I-ին հատուկ վեպ է նվիրված եղել, այլև պնդելու, թե «Հատուած գնացեալ Վարդգէս...» տողով փրկված բեկորն առնված է հենց այդ վեպից։ Եվ այդ վեպի հիման վրա է, որ հորենացին այնքան վստահորեն բացատրել է, թե այդ տողերում նշված Երվանդը՝ «Երուանդ Առաջինն է, Սակաւակեացն, որ ի Հայկազանց, զորոյ քոյրն կին առեալ Վարդգէսի...»։

Այս կարծիքն ավելի անառարկելի կդառնա, եթե հիշենք «Տիգրան և Աթղահակ» վեպը։ Այդ Տիգրանը, ինչպես հայտնի է, Երվանդ I-ի որդին է, իսկ նրա մղած պայքարը՝ նույն այն Աթղահակի դեմ է ուղղված եղել, որից ազատագրվելու առաջին փորձերը կատարել է Երվանդ I-ը, այսինքն, նույն Տիգրանի հայրը։ Այս առումով ուշագրավ է Քսենոփոնի Կյուրոպեդիայում ներկայացված Տիգրան I-ի հոր (իմա՝ Երվանդ I-ի) կերպարը, որը թեկուզև պարտված, բայց հերոսական է՝ Աթղահակի դեմ կազմակերպված խռովության մեջ և նրա զորավար Կյուրոսին տված ազատասիրական պատասխաններով։ Նրան անկասելի մահից և իրենց ընտանիքը գերությունից փրկում է որդին՝ Տիգրան I-ը՝ Կյուրոսի հետ ունեցած մտերմության շնորհիվ²⁵։

Եվ արդ, եթե Տիգրան Առաջինը հանդիսանում է իր հոր հայրենասիրական և անձնուրաց երազանքների շարունակողը, Աթղահակի լծից հայրենիքն ազատողը, ապա բնականաբար Տիգրան I-ին նվիրված վեպը չէր կարող սլասլաճ զրվագ չհատկացնել Երվանդ I-ին։ Զե՛ որ հենց այդ ամբողջությամբ էին լիարժեք դառնալու և՛ Տիգրանի, և՛ Տիգրսունուհու, և՛ Աթղահակի կերպարները, ինչպես նաև, որ ամենից գլխավորն է, մեղական լծի դեմ հայ ժողովրդի ծավալած պայքարը՝ Երվանդ I-ից մինչև Տիգրան I-ի ու Կյուրոսի հաղթանակը։

Չմոռանանք, որ այդ ժամանակ հայ ժողովրդի կյանքում տեղի էին ունեցել դարագլխային այնպիսի վիթխարի երևույթներ, ինչպիսիք էին հայ ժողովրդի կազմավորման ավարտը (մ. թ. ա. VII—VI դդ.²⁶), խուրինների ստեղծած ուրարտական պետությունից ազատվելը²⁷, անկախություն ունենալու հույսով մեղացիներին դաշնակցելը, քաղալուրության իրավունքով

24 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 894։

25 «Քսենոփոնտեայ Կյուրոսի խրատու պատմությունը», Վենետիկ, 1843, էջ 141—159։

26 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, էջ 438—439։

27 Ն. Աղոն, Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 273։

մեղական իշխանության տակ գտնվելը²⁸ և առհասարակ աղատաբերական պայքարի համառու երկարատև այն ուղին ընտրելը, որը մ. թ. ա. 521—520 թթ. անօրինակ բռնկումների հասա՞վ²⁹ Արեմենյանների դեմ:

Մ. թ. ա. VII—VI դդ. քաղաքական այդ բուռն փոփոխումներն են ահա, որ նյութ են դարձել նրվանդունիներին նվիրված վեպի, որից էլ հայտնի են դառնում նրա երկու գլխավոր դրվագները³⁰: Առաջինը կապված է նրվանդ I-ի, հսկ երկրորդը՝ Տիգրան I-ի հետ:

Այժմ՝ նրվանդ I-ի նստավայր-քաղաքի մասին: Այս հարցը ղեռն լուրջ քննության շտաբկա չի դարձել և ընդունելի պատասխան չի ստացել: Փորձեր են արված ցույց տալու, որ առհասարակ նրվանդունիների դինաստիայի սկզբնական նստավայրը հանդիսացել է Վանը և նրա շրջակայքը, որտեղից այն հետագայում տեղափոխվել է Արարատյան դաշտ (Արմավիր): Բայց, ահա, «Հատուած զնացեալ Վարդգէս...» բեկորը և նրա ուսումնասիրությունը հիմք են տալիս պնդելու, թե նրվանդ I-ի նստավայրն էլ գտնվելիս է եղել Արարատյան դաշտում, Արտիմեդ քաղաքում: Այս կարևոր խնդիրը լուծելու նպատակով վերստին վերհիշենք քննվող բեկորը.

Հատուած զնացեալ Վարդգէս,
Մանուկն ի Տուհաց գաւառէն.
ԶՔասաղ գետով եկեալ,
Խառաւ պէրէլ բլրով.
ԶԱրտիմէդ քաղաքաւ,
ԶՔասաղ գետով՝
Կոնէ կոփել զդուռնն
Նրուանդայ արքայի:

Այսպէս պարզ ասված է, որ Արարատյան դաշտում, Քասաղ գետի ափին, Նրեշ բլուրի մոտ, արդի Վաղարշապատի տեղում (կամ կողքին), գտնվելիս է եղել Արտիմեդ անունով մի քաղաք, ուր և նստելիս է եղել նրվանդ I արքան: Վարդգես Մանուկն էլ, Քասաղ գետն ի վար իջնելով, կանգ է առել այդ քաղաքի դարպասի (կամ դարպասներից մեկի) առջև և շատ չսնցած, ինչպես վկայվում է կից տվյալներով, ամուսնացել է ու կառուցել Վարդգեսա-

28 Այս առումով ուշադրա՞վ են, օրինակ, Հեռի («Ներկերի ժողովածու», հատ. Ա, Երեւան, 1966, էջ 250—252, 531—532), Ն. Աղոնցի («Հայաստանի պատմություն», էջ 324—336), Ի. Դյակոնովի («История Мидии», 1956, էջ 354) և այլոց կարծիքներն այն մասին, որ մեղական շրջանում հայերը պիտի ունեցած լինեին թագավորություն: Այսպես, Ի. Դյակոնովը գրում է. «Поэтому, кажется возможным, что в Армении в мидийское время действительно существовала не сатрапия, а свое, зависимое от Мидии царство» (նշվ. տեղում): Այս բոլորը, մեր կարծիքով, համահնչյուն են Երեմիա մարգարեի կոչին՝ հասցեադրված նաև Արարատյան թագավորությանը. մանավանդ որ նրվանդ I-ն էլ Արարատյան դաշտում է եղել և ունեցել է արքա նաևորդ:

29 Հ. Մանանդյան Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Ա, Երևան, 1945, էջ 47—55:

30 Այս ընդհանուր հենքի վրա վատատեսությամբ է հնչում այն հայտարարությունը, թե Արարատի անկման ժամանակ «среди местных племен — многовековых врагов Бнайни — особое место занимали протоармяне...» (Н. В. Арутюнян, Бнайни, Ереван, 1970, էջ 439. ընդգծումը մերն է—Ա. Մ.):

վանքի։ Ուշադրամբ այն է, որ առասպելում Արտիմեդի աշխարհադրական տեղը այնքան որոշակի է ցույց տրված և այն էլ՝ մի շարք պատմական, կոնկրետ վայրերի օգնությամբ, որ այդտեղ թյուրիմացություն որոնելն անհիմն կլինի։

Ուստի անհրաժեշտություն է առաջադրել այն փաստերն ու փաստարկումները, որոնց համաձայն մասնագետները Երվանդունիների դինաստիայի սկզբնական շրջանի (այդ թվում նաև Երվանդ I-ի) համար որպես նստավայր ընտրել են Վանն ու շրջակայքը։ Քանի որ այդ փաստերն իրենց ամբողջությամբ օգտագործված են «Հայ ժողովրդի պատմության» բանիցս հիշված հատորում, հետևաբար բավական կլինի Ժանոթանյալ նրանց այդ հատորի էջերում։

Համապատասխան փաստերից երկուսը բաղված են XVIII դարի ձեռագրերի հիշատակարաններից և լույս աշխարհ էր բերվել, թե Վան քաղաքը կոչվել է նաև «Երուանդաուն»³¹։ Այստեղ ոչ մի խոսք այն մասին, թե այդ «Երվանդաուն» կապվում է մ. թ. ա. VI դարի ու Երվանդունիների առաջին արքաների հետ։ Հասկանալի է, որ դա, տվյալ դեպքում, որոշիչ լինել չի կարող։ Հաջորդ փաստը՝ «Աշխարհացույցի» տվյալն է այն մասին, թե Վասպուրականում եղել է «Երվանդունի» կոչվող գավառ։ Եթե անգամ մեզ թույլ տալու լինենք մտածելու, որ այդ կոչումը դալիս է շատ ավելի հին դարերի խորքից, դարձյալ հիմք չենք ունենա պնդելու, թե Երվանդ I-ը նստել է այն կոչմանում։ Այդ մասին տվյալ վկայությունը խիստ անզոր է, որովհետև գուրեզ է այնպիսի կոնկրետությունից, որպիսին ունի «Հատուած դնացեալ Վարդգէս...» գրույցը³²։ Հաջորդ փոքր ի շատև կոնկրետ փաստի տպավորություն թողնող վկայությունների փնջի մասին ասված է. «Դրանք խիստ վերամշակված ձևով և իբրև հետադա վերապրուկներ պահպանվել են Թովմա Արծրունու «Պատմութիւն տանն Արծրունեաց» երկում»։ Դրանցից վկայակոչվում է միայն մի նմուշ. «Թ. Արծրունին ազոտ տեղեկություններ է բերում Երվանդ խազադորի մասին, որն քստ ավանդության «դայ բանակի առ ստորեւում ... Տոսպ»³³, «Գայ բանակի» դարձվածքը նշանակում է, որ նշված Երուանդն ուրիշ տեղից է եկել և նրա նստավայրն այլ տեղ պիտի որոնվի։

Հիշվելի, պարզվում է, որ Թովմա Արծրունին այնքան էլ «ազոտ տեղեկություններ» չի հաղորդում. նա շատ որոշակի խոսում է ոչ թե անորոշ Երվանդի մասին, այլ՝ Երվանդ Վերջինի, որը պիտի վան է արշավել իր ձեռքից պրծած Արտաշես դաճաճառանդին որսալու նպատակով։ Լսենք Թովմա Արծրունուն, որը խոսում է Սմբատի, Արտաշեսի և Սահակի մասին, գրելով. «Իսկ Սմբատ առեալ զԱրտաշէս բնակէ ի Զարաւանդ Ատրպատականի, և գրէ առ Սահակ դառնալ առ Երուանդ, թերևս հնար լիցի խորհել ինչ վասն Երուանդայ։ Նորա ունկնդիր եղեալ դայ առանց յապաղանաց, և առջի ղնէ Երուանդայ զպատճառ փախստեան, ասէ՝ զի դայեկաբար զորդիսն Սանատրկայ սնուցեաք, և դու ի թագաւորելոյ քո որոյ երդմունս արարեալ յԱրտեմի և յԱրամազդ...» և այլն։ Ահա այս բոլորից հետո է, որ «Երուանդայ հետա-

31 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 437։

32 Ինչպես կատեսներ ստորև, աշխարհագրական աղբյուրի անուններ կան նաև ուրիշ երկրներում։

33 Նույն տեղում։

զուտեալ դայ բանակի առ ստորոտով լերինն ի դուխ Տոսպ գաւառի, և կոչլ զտեղին Երուանդականս: Բայց մենք շարունակենք լսել պատմիչին. «Զայս սգացեալ Երուանդայ ետ տանել զՍահակ կապանօք յԱրմաւիր, անդ կեցեալ և մեռեալ ի նմին կապանս»³⁴:

Որ այստեղ խոսքը Երվանդ Վերջինի և ապագայի Արտաշէս I-ի մասին է, տարակույս լինել չի կարող, որ այդ Երվանդի նստավայրն էլ Արմավիրն էր, դա ևս անտարակուսելի է: Վանի շրջակայքի «Երուանդական»-ն էլ՝ Երվանդ Վերջինի անվան հետ է կապված, այն էլ՝ ոչ որպէս նստավայրի: Ուստի Թովմա Արծրունու հաղորդած տեղեկությունների համաձայն, Երվանդունիների նստավայրը ոչ թէ Վանն է, այլ Արմավիրը: Բայց, ինչպէս տեսանք, այդ բոլորը վերաբերում են Երվանդ Վերջինին: Իսկ թէ ո՞ւր էր նստում Երվանդ I-ը, այս հարցին Թովմա Արծրունին չի պատասխանում: Այդ հարցի միակ և հնազույն պատասխանը պահպանել է «Հատուած դնացեալ Վարդգէս...» գրույցը, և փրկել՝ Մովսէս Խորենացին: Խոսքը Արտիմեդ քաղաքի և Արարատյան դաշտի մասին է:

Թովմա Արծրունու վկայության սույն մեկնաբանությունը հիմք է տալիս միաժամանակ պնդելու, որ XVIII դարի ձեռագրային վերահիշյալ վկայությունները և «Աշխարհացույցի» տեղեկությունը, ամենայն հավանականութեամբ, պայմանավորված են Երվանդ Վերջինի նշված արշավանքով և «զտեղիս Երուանդական» կոչելով:

Այսպիսով, մեր այս պարզաբանմամբ հիմքից զրկվում է այն ենթադրությունը, որի համաձայն, իբր թէ, Վանը և շրջակայքի «վայրերը կապված են Երուանդունիների շինաստիպի թագավորների գործունեության հետ այն ժամանակաշրջանում, երբ նրանք դեռևս Այրարատի իշխողները չէին, այսինքն՝ Նաբանդանի և մեղական ժամանակաշրջանում»³⁵:

Այժմ անդրադառնանք քաղաքի պատմությանը և նրա առնչությանը՝ Վարդգեսավան-Վաղարշապատ քաղաքի հետ: Այս հարցին տրված մեկնաբանությունները նույնպէս համոզիչ չեն: Բնորոշն այն է, որ այդ քաղաքները կամ նույնացվել են, կամ էլ Վարդգեսավանը հիմնված է համարվել Արտիմեդի տեղում: Հաճախ էլ, Մ. Աբեղյանի մեկնաբանության պատճառով, նրանց պատմությունը տեղաշարժել են դեպի հաջորդ դարերը՝ կապելով Երվանդ Վերջինի ժամանակների հետ:

Խոսելով Վարդգէս Մանկան ամուսնության մասին, Զամչյանը գրում է, որ Վարդգէսը, զրանից հետո, «չինեւոց ձեռակերտ ի վերայ Քասաղ գետոյ՝ կոչեցեալ աւան Վարդգէսի, ի տեղոջ անդ՝ ուր յառաջն կայր քաղաքն Արտիմէդ յանուն Արտեմեայ դիցին»³⁶: Ըստ այդմ էլ նա Վաղարշապատի վերաբերյալ ծանոթության մեջ տաւում է. «Սա ի հնումն կոչիր Արտիմէդ, և աւան Վարդգէսի»³⁷:

Մ. Զամչյանի կարծիքով Վարդգեսավանը կառուցվել է Արտիմեդի տեղում, մինչդեռ սկզբնաղբյուրի համաձայն, Արտիմեդն այն ժամանակ չեն քաղաք էր, որի թագավորի գոտն էր բախում Վարդգէս Մանուկը՝ ամուս-

34 Թովմա Արծրունի, Պատմութիւն տանն Արծրունեաց, ՍՊԲ, 1887, էջ 50:

35 «Հայ ժողովրդի պատմություն», հատ. Ա, էջ 138:

36 Մ. Զամչյան, Պատմութիւն Հայոց, հատ. Ա, էջ 101—102:

7 Նույն տեղում, հատ. Գ, էջ 187 (ցանկում):

նությունն նպատակով: Ուստի նրա հիմնած ավանդ պիտի որոնվի ոչ թե Արտիմեդի տեղում, նրա փրատակների վրա, այլ՝ հարևանությամբ:

Ս. Չամչյանի նման է մտածել նաև Ղ. Ինճիճյանը՝ գրելով. «Վաղարշապատ: Արքայանիստ քաղաք... Ձառաջինն կոչէր սա Արտիմեդ քաղաք. գուցե յունական անունն է Արտեմեայ դից՝ որ ի հայս կոչի Անահիտ: Իսկ բլուրն յոր շինեալ էր՝ կոչէր Շրէյ (իմա՛ Շրէշ—Ա. Մ.), ապա կոչեցաւ Վարդգէսի տան. յետ պարսկապատ առնելոյ Վաղարշայ տրքայի՝ կոչեցաւ Վաղարշապատ, և նոր քաղաք»³⁸:

Փաստորեն Մ. Չամչյանին և Ղ. Ինճիճյանին է կրկնել նաև Ղ. Ալիշանը, երբ նկատի տոնելով Վարդգես Մանկան մասին եղած փշրանքն ու Մովսես Խորենացու լրացուցիչ բացատրությունը, գրել է. «Էջմիածին գեօղ... տեղին յիշատակի յառաջ քան զ2500 ամս, առ Երուսաղա հարբ Հայկազինն Տիգրանայ, առ որով ի Շրէյ (իմա՛ Շրէշ) բլրի՝ որ թուի կոչեցեալն այժմ Ուրա-նից կսնդ, քեռայր նորին Վարդգէս շինեաց կամ նորոգեաց զառաջինն աւանն Արտիմէդ անուն, և յիւր անուն կոչեաց Վարդգէս»³⁹:

Ինչպես գիտենք, բնավոր վայրերի և նրանց անունների մասին միակ սկզբնաղբյուրը՝ Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց» երկն է, իսկ այնտեղ չի ասվում, թե Արտիմեդը ավերված էր կամ էլ՝ նրա տեղում կառուցվեց Վարդգեսի ավանը: Ընդհակառակն, նրա մասին խոսում է որպես արքայանիստ ու շեն քաղաքի:

Ղ. Ալիշանը նույնպիսի կարծիք է հայտնել նաև հետազոտում, երբ, նկատի առնելով Վարդգեսավան-Վաղարշապատը, ինչպես նաև Արտիմեդը, անդրադարձաւ, առանց հատուկ բացատրության գրել է. «... ըստ որոյ մի ի քաղաքաց աշխարհիս մերոյ բնծայի, և առաջին յետ ձեռակերտաց բնիկ Հայկազանց, զի կանխէ քան զժամանակն Տիգրանայ Ա և Կիրոսի»⁴⁰:

Հ. Մանանդյանը, հանդիպելով այս հարցին, գրել է. «Можно, как я полагаю, предположить, что город Вагаршанат, называвшийся раньше «городом Артемиды», а затем «село Вардгеса...» և այլն»⁴¹:

Նման պատկերացում է առկա նաև Ս. Էփրիկյանի⁴², Ս. Երեմյանի⁴³, Թ. Հակոբյանի⁴⁴, Ս. Կրկյաշարյանի⁴⁵ և այլոց աշխատություններում:

Մեր կարծիքով, նման պատկերացման համար մասնակի հիմք կա Մովսես Խորենացու մոտ: Բանն այն է, որ նա ինքը Արտիմեդի մասին չի խոսում, այլ բավարարվում է երդի փշրանքում եղած հիշատակումով: Հետո, երբ պատմում է Վաղարշապատի մասին, նա նկատի է առնում լոկ Վարդգեսավանը՝ լուելով Արտիմեդի վերաբերյալ: Ըստ երևույթին, դրա պատճառը պիտի որոնել շինարարական աշխատանքների և վերակառուցումների մեջ, որոնց շնորհիվ, գեթ Վաղարշի շինարարությունների ժամանակ, Արտիմեդն էլ, հա-

38 Ղ. Ինճիճյան, Ստորագրութիւն հին Հայաստանեայց, էջ 471:

39 Ղ. Ալիշան, Քաղաքական աշխարհագրութիւն, էջ 65:

40 Ղ. Ալիշան, Այրաբատ, էջ 204:

41 Գ. Манандян, О торговле и городах Армении..., Ереван, 1954, էջ 515—516:

42 Ս. Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հատ. Ա, Վենետիկ, 1902, էջ 325:

43 Ս. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 1963, էջ 82:

44 Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, 1968, էջ 144:

45 Ս. Կրկյաշարյան, Հին Հայաստանի և Փոքր Հայքի քաղաքների պատմության գրվածքներ, Երևան, 1970, էջ 122:

վանարար, ընդգրկվել է Վարդգեսավան-Վաղարշապատի ընդհանուր պարիսպների օղակում, եթե միայն զրանից առաջ չէին նրանք ծավալվելով միաձուլվել: Մեզ համար, սակայն, այստեղ մեծ կարևորություն ունի ոչ թե նշված կենտրոնների միաձուլված լինելու պարագան, այլ նրանց ծագման, առաջացման և մանավանդ Արտիմեղի աբխազանիստ լինելու խնդիրն ու նրա հնարվումը: Նաև զրանով է, որ այնքան բացառիկ նշանակություն ունի «Հատուած գնացեալ Վարդգէս...» փշրանքը՝ իր հերոսով, որը «զՔասաղ զետով եկեալ նստաւ... զԱրտիմէղ քաղաքաւ», որպէսզի կոնկրետ «զգոունն երուանդայ արքայի»: Իսկ դա վկայում է, որ իրոք Արտիմեղ քաղաքը կար նախքան Վարդգես Մանկան՝ նրա մուտքի մոտ երևալը և Վարդգեսավան կառուցելը: Հետևապէս մ. թ. ա. «մոտ 570—560 թթ.», երբ թագավոր էր Նրվանդ I-ը, Արարատյան դաշտում, Քասաղ զետի ափին, Նրեշ բլուրի մոտ եղել է մի արքայանիստ քաղաք՝ Արտիմեղ անունով: Եվ քանի որ մ. թ. ա. 570—560-ական թթ. շեն ու կանգուն էր այդ քաղաքը, կնշտնակի այն պետք է, որ ավելի հին ծագում ունենար:

Այժմ ընդունված է «կոնկրետ զգոունն» տողը հասկանալ խնամախոսությամբ, մեկի աղջիկն ուզելու իմաստով⁴⁶:

Պետք է ավելացնել, սակայն, որ հին մատենագրության մեջ «կոնկրետ» դարձվածքը այլ առումներ ունի, հիմնականում, ստեղծագործ աշխատանք: Օրինակ, Ազատանգեղոսը խոսելով բրիստոնեության մուտքի մասանակ հեթանոսական կուրքերի խորտակման մասին, գրում է «... բառնային զգայականացուցիչսն անմոռնչս, զծուլալսն, կոնկրետսն, քանզակեալսն...»⁴⁷: Աստվածաշնչի թարգմանության մեջ կարդում ենք. «Քաջալերեսցէ հիւսն զգարբինն, կոնկրետսն, ուն հարկանել»⁴⁸: Հովհաննէս Երզնկացին (Պլուզ) օգտագործում է ալիսիսի նախադասություն. «Արդ ի՞նչ ձայն տաքոք կոնկրետսն և կոփկոնկրետսն Հոմերոսեանք քերթուածիցս»⁴⁹: Նույն իմաստով են այդ դարձվածքը և գրույցի քննվող տողը՝ մեկնաբանել «Բառգիրք հայկազեան լեզուի» հատորի հեղինակները⁵⁰:

Այսպէս մոտենալով խնդրին՝ ի դեմս Վարդգես Մանկան կունենանք նրվանդ արքայի դուստր (Արտիմեղ քաղաքի մետաղյա դարպասներից մեկի) կողմ-կոփող վարպետ: Դա էլ ենթադրել կտա բարեկարգման աշխատանքներ կամ նոր շինարարություն: Երբ որ զեպքերում, սակայն, ունենում ենք «Բառաբան»՝ Արտիմեղ անունով և «աւան»՝ Վարդգեսի անունով:

Այս ընդհանուր տվյալներին այսօր ընդառաջ են դալիս էջմիածնի մայր տաճարի բեմի տակից պեղումով ի հայտ եկած հեթանոսական կրակարանն ու պաշտամունքային քարե կոթողը. վերջինս կապվում է առնվազն մ. թ. ա. IX—VII դդ. հետ: Անկախ ամեն ինչից, զրանք խոսում են այն մասին, որ

46 Մ. Արեղյան, Երկեր, հատ. Ա, էջ 128—129: Տե՛ս նաև Մովսէս Խորենացի, Պատմություն հայոց (աշխարհարար թարգմ.), Երևան, 1968, էջ 354—355: Ըստ այդմ այդ տողը թարգմանված է այսպէս. «Երվանդ արքայի դուստր թակելու»:

47 Աղաթանգեղոս, Պատմություն Հայոց, Տփղիս, 1909, էջ 410:

48 «Նսայի», ԽԱ, 7:

49 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 2329, թերթ 201ա:

50 «Բառգիրք հայկազեան լեզուի», Ա, Վենետիկ, 1836, էջ 1127, «Կոնկրետ» բառի բացատրության մեջ: Այդպիսի մեկնաբանություն և համապատասխան փաստեր տե՛ս Բ. Առաքելյան, Հայկական պատկերաքանդակներ VI—VII դարերում, Երևան, 1949, էջ 102—103:

Վարդգես Մանկան ավանդ հիմնված է եղել պաշտամունքային խոշոր կենտրոնի մոտ: Քանի որ հնում նման կենտրոնները քաղաքներում էին կամ նրանց մոտակայքում, ուստի էջմիածնի տաճարի շուրջը կամ մոտակայքում մ. թ. ա. IX—VIII դդ. պիտի այնպիսի բնակավայր եղած լիներ, որը մ. թ. ա. VII—VI դդ. դառնար քաղաք և հանդիսանար Ծրվանդունիների նստավայր⁵¹:

Ցավոք, Արտիմեղ քաղաքի մասին Մովսես Խորենացուց բացի ուրիշ մատենագիր չի խոսում: Լոկ մի տարակուսելի փաստ է հայտնի՝ կապված Հակոբ Ծրճեցու հետ: Նրա վարքում կարգում ենք. «...և դառադրեալ բանակարգն ի լեւոն Մասիս կացուցեալ, և պատմութիւն վասն աղբերն, որ ցամաքեցոյց և գհեր աղջկանցն ի սպիտակութիւն դարձոյց... յաւան դեօղն որ Արտամետն կոչի...»⁵²: Այլ աղբյուրներում այս Արտամետն նույնացված է Վանի Արտամետի հետ: Բայց արդյոք չի՞ կարելի մտածել, որ միմյանց հետ են շահեթված Վանի և Վաղարշապատի մոտ գտնված համանուն բնակավայրերը և այդտեղ առկա է հուշ հին Արտիմեղի մասին:

Արտիմեղ քաղաքի մասին որոշ տեղեկություն կտար նաև նրա անունը («Արտիմեղ»), եթե այն ճիշտ մեկնաբանվեր: Արտիմեղ, Արտամեղ, Մարմետ տեղանունների մասին Հ. Հյուբշմանը ճիշտ դիտողություն է անում, երբ այնտեղ չի ուղղում տեսնել ժողովրդական ստուգաբանությամբ նկատվող «մետ»-«եկք» հասկացությունը և դրա փոխարեն մատնացույց է անում Artemida: տաժաժուհու անունը⁵³: Առկա է, սակայն, մասնակի տարբերություն («Արտիմեղ»), որը կարող է և՛ բացատրվել, և՛ առնչվել սեպագիր արձանագրություններում հիշվող այն տաժաժուհու անվան հետ, որին մասնագետները տեսնում են Արդի, Արդինի, Սարդի, Շելարդի, Ցինուարդի և նման այլ անունների մեջ⁵⁴:

Բայց ավելի հավանական կլիներ մտածել ժամանակի մեղա-իրանական պաշտամունքային պատկերացումներում առկա «Արտա» սրբության վերաբերյալ: Ի. Դյակոնովը գրում է. «Ջրադաշտի բոլոր աղոթքներն ուղղված են միմիայն Ահուրա Մադդային և նրա: Արտին—«Արդարությանը», որը մարմնավորում է բնական հավատքի ուժերը»⁵⁵: Նույն հեղինակը նկատում է, որ «Արտա մասնիկը» հանդիպում է շատ հատուկ անունների մեջ⁵⁶: Հավանաբար այդ ուղորտից է նաև իրանական Արտիպիհեշտ (Արտապահեշտ) սրբանունը⁵⁷: Վերոհիշյալ Արտան շատ շանցած դարձավ ավելի ինքնուրույն պաշտամունք⁵⁸: Միաժամանակ հայտնի է, որ հայ ժողովուրդը քննվող ժամանակներում կապված էր մեղական, ապա իրանական պետությունների հետ: Դրանք կրոնական համապատասխան պաշտամունք՝ իր Արամադդով, ուստի և նրա Աբտայով, այսինքն, «Արդարությամբ»: Ուշագրավ է, որ հայերեն «Արդարություն» բառն էլ՝ իմաստով և արմատով նույնական է դրադաշտական

51 Առավել հին փաստեր տե՛ս Ա. Քալանթար, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935:

52 «Սոփերք հայկականը», Կատ. ԻԲ (22), էջ 23:

53 Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղույ անունները, Վիեննա, 1907, էջ 315:

54 Г. А. Меликишвили, Напрн-Нрарту, Тбилиси, 1954, էջ 35—37, 369—375:

55 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, էջ 387:

56 Նույն տեղում, էջ 397:

57 Ղ. Ալիշան, Հին հատար, Վենետիկ, 1910, էջ 13, 361, 366:

58 И. М. Дьяконов, նշվ. աշխ., էջ 397:

«Արա»-ին⁵⁹: Մյուս կողմից էլ էջմիածնի Մայր Տաճարի բնօրինակի հիմքի պեղումներից ի հայտ եկած կոթողն ու կրակարանը վկայում են, որ այնտեղ էղել է պատշաճ հնություն սրբավայր:

Ինչ վերաբերում է Արտեմիսիէ, ապա դա շատ է վկայված նրավանդ Վերջինի և Արմավիրի կապակցությամբ: Քիչ առաջ հիշեցինք փաստ, որի համաձայն այդ Երվանդը Երզնկ է գլխավորում և յԱրամազդ: Եթե այդպիսի վկայություն ունենայինք նաև Երվանդ I-ի մասին, ինչպիսիք անհամեմատ հեշտ կլուծվեր: Բոլոր դեպքերում, սակայն, հիմք կա համոզվելու, որ Արտեմիէ թաղաքը կոչվել է սրբավայրի և աստվածության անունով:

Սյա առումով բացառիկ արժեք է ներկայացնում նույն ժամանակների ծնունդ «Երվանդ և Աթղահակ» առուսպերը.

Էր ինձ,—ասէ,—ո՛վ սիրելիք,
 Լինել ալսօր Երկրի անժանօթում,
 Մերձ ի լեռոն մի Երկար յերկրէ բարձրութեամբ,
 Որոյ դազաթնն սաստկութեամբ ստոնամանեաց թուէր պատեալ:
 Եւ ասէին յերկրին Հայկազանց զայս լինել:
 Եւ ի նայել իմ յերկարադոյնս ի լեռանն
 Կին ոմն ծիրանազգեստ, Երկնադոյն ունելով յիրեաւ տէռ:
 Նստեալ Երեւոյս ի ծայրի այնպիսոյ բարձրութեան,
 Աչնդ, բարձրահասակ և կարմրույտ,
 Երկանց ըմբռնեալ ցաւովք:
 Եւ ի յերկարադոյնս նայեալ իմ յայնպիսի Երեւոմն
 Եւ ի հիացման լինել՝
 Մնալ յանկարծ կիճն
 Եւ իս կառաւելոյս ի ղիցազանգ հասակաւ և բնութեամբ:
 Առաջինն զԵրանսն ածեալ ի վերայ առիծո՛ւ՝ սլանալ յաւմոտս,
 Եւ Երկուրդն ի վերայ բեժո՛ւ՝ ի հիսիսի հալելով,
 Իսկ Երկուրդն զվիշապ անաբի հեծեալ՝
 Ի մերոյ վերայ շահատակեալ յաւճակէ տէրութեանս⁶⁰:

Ապա նկարագրվում է, թե ինչպես վիշապին նստած ղյուցաղներ հարձակվելով Մարաստանի վրա՝ կռվի է բռնվում Աթղահակի հետ և կամենում կործանել նրա սրբություններն ու պետությունը: Այդ ղյուցաղներ Տիգրան I-ն է, որից էլ, բայց առասպելի, պարտվում է Աթղահակը իրականում: Նկարագրությունից պարզ երևում է, որ սրբազան սարը Մասիսն է, իսկ նրա ղաղաթինը ծննդաբերող զեղատես կինը՝ հայոց Մայր աստվածուհին:

Անկախ մանրամասնություններից, կարող ենք ասել, որ այն ժամանակվա պատկերմամբ Հայոց Մայր աստվածուհին նորից Արարատում է:

59 Հ. Աճառյան, Հայերեն արձատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971, էջ 306—209; Առավել հին պաշտամունքային կենտրոն է հանդիսացել ոչ այնքան հեռու գտնվող Մեծամորը՝ ընդգրկելով մ. թ. ա. III—I հազարամյակները, անշուշտ, նաև ավելի ուշ ժամանակները («Մեծամոր», Երևան, 1973, էջ 107—141): Ըստ երևույթին այս հնամենի ավանդների յուրատեսակ շարունակողներն էին Երվանդունիները:

60 Մ Ո Վ Ս Ե Ս Խ Ո Ր Ե Ն Ա Ս Ե Ի, էջ 75—76 (տողատուր և ընդգծումը մերն են.—Ա. Մ.):

եվ քանի որ Տիգրան 1-ի հայրը՝ Երվանդ 1-ն էլ Արարատյան դաշտում էր, սուտի հենց այստեղից էլ Աժդահակն սպասել է Տիգրանին:

Ինչպես հայտնի է, հնագույն ժամանակներից եկող յուրաքանչյուր գրույց և մանավանդ առասպել—վեպ ավելի լրիվ է հասկացվում նրա մեջ առկա դիցարանական հուշակացությունների շնորհիվ: Հենց այդ պատճառով էր, որ մենք վերևում ինքնաբերաբար մտանք նաև նման բացատրությունները մեջ: Հարցի այդ կողմն ամբողջական կլինեք, եթե փորձեինք անդրադառնալ նաև վեպից հայտնի երկու հերոսների՝ Երվանդ արքայի և Վարդգես մանկան բնավորությունների առասպելա-դիցաբանական զծերին:

Մասնագետները, իրավացիորեն, հավաստության նշան են դնում Երուանդ-Արուանդ-Օրոնտ (Օրոնտես) ձևերի միջև, ցույց տալով նրանց տարածումը Հին Արևելքի մի շարք երկրներում՝ թե՛ որպես գետերի ու լեռների, և թե՛ որպես մարդկանց անուններ: Հիշենք մի քանի փաստ: Մի բառարանում կարդում ենք. «Orontes — Оронт, персидское имя... Главная река в Сирии... Горы, от южного берега Каспийского моря... между Гирканией, Парфией и Мидией... По новоперсидски называемая Эрванд или Эльвенд»⁶¹.

2. Աճառյանը գրում է. «Երուանդ, ար>պհլ. arvand = գնդ. arva-aug-vant՝ «արագ. քաջ» բառից. հմտ. սանս. arvant «բաջրնթացիկ, արագրնթաց (ծի)» ... մի խումբ պարսիկ սատրապներ Հայաստանում (Դ զսոռ ն. Ք.) Orontes՝ Լիկացոց ղլխաւորը... Arwand՝ Տիգրիս գետի անունն է...»⁶²: Փորձ է արված քննվող հասկացությունը կապել արև հասկացության հետ՝ հիմք ընդունելով նաև արագրնթաց (ծի)» բացատրությունը, երկվա բառը և այն ծեսը, երբ պարսիկներն Օրոնտ լեռն են բարձրացել՝ որևէ պաշտամունքին նվիրված ծիսակատարության ժամանակ⁶³: Անկախ մանրամասնություններից, այս և նման այլ վկայությունները, որոշ բացատրությամբ, խոսում են Երվանդ անվան և Երվանդոսի տեղի հետ կապված դիցաբանական հին պատկերացումների մասին: Պալով հայ իրականությունից առնված փաստերին ապա դրանցից ուշագրավը Տիգրիս գետի Arwand կոչումն է: Այս կապակցությամբ բացառիկ կարևորություն ունի հետևյալ վկայությունը՝ պահպանված Գրիգոր Պարթևի (Լուսավորիչի) «Կանոնում». «Ասեն. բաջաց վիշապաց տեսրք (տաճարք) են լերինս բարձունս և բնակւոյիւնր. և զԱղէքսանդր կապեալ ունին ի Հոռմ և զԱրտաւազդ ի Մառիս, և զԱրուանդ ի գետս և ի մոալլս»⁶⁴: Այստեղ խոսվում է հայոց Երվանդ անունով թագավորներից մեկի մասին, ենթադրել տալով, որ նա էլ, ինչպես Արտավազդը, կուլ է գնացել պատահաբար: Եթե առաջինին քաջքերը տարել են գետի Մասսի խորխորատները, ապա Երվանդին սուպիլ են ջրերի ալիքների խորքը: Այսպիսի հիմքերի համաձայն է, որ Ղ. Արիշանը գրել է. «Հայք բոնավոր թագա-

61. Ф.р. Л ю б к е р. Реальный словарь..., СПб., 1888, էջ 725:

62. 2. Ա ճ առ յ ա ն, Հայոց անձնանունների բառարան, հատ. Բ, Երևան, 1944, էջ 145:

63. Տե՛ս «Աշխատությունների Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. 1, Երևան, 1948, էջ 83—84:

64. «Բանբեր Մատենադարանի», № 7, 1964, էջ 323—327:

վոր մ'ունենին (Երուանդ, որո անունն Սձ կամ Վիշապ նշանակե), դա ալ կրսեն բռնեցին Քաջք և բշեցին «ի ղետս և ի մոայլս»⁶⁵:

Մեզ աշնակես է թվում, որ այս տեղեկությունը վերաբերել է ոչ թե Երվանդ Վերջինին, ինչպես կարծել է Ղ. Ալիշանը, այլ Երվանդ I-ին, որովհետև Երվանդ Վերջինը սպանվել է պատերազմի ժամանակ և թաղվել «մահարձանօք»⁶⁶: Դրան հակառակ, Երվանդ I-ն է, որ համահունչ կոչվել է Սակավակաց, այսինքն, կյանքից վաղաժամ զրկված, համաճար ղետասույլ լինելու պատճառով: Ուշագրավ է, որ Արտավազդն էլ է կոչվել «Արտաւադ Սակաւակեաց»⁶⁷: Հայտնի է, որ Երվանդունի Երուադ բրմապետն էլ գետում խեղդվեց («ի պտոյտ մի գետոյն»), բայց նրան Արտաշես թագավորի ղինվորներն սպանեցին: Այս փաստը մեզ համար արժեք կներկայացներ, եթե պարզվեր, որ նրան ղետախեղդ անելը պատճառաբանվել է Երվանդունիների և ղետերի մասին եղած հին պատկերացումներով:

Երվանդ բառի՝ վերջում բերված մեկնաբանությունների մեջ տեսանք, որ նրա հետ են կապվում նաև վիշապ, օձ, քաջ հասկացությունները: Այս առումով ուշագրավ է «Քարթլիս Յխովրեբայի» այն տեղեկությունը, ըստ որի հայոց Երվանդ թագավորը «Ծունդա» (Ախալքալաք) քաղաքը բնակեցնում է «ղիախօս» (ոչ վրացախոս) մարդկանցով և վերանվանում քաղաքն «տան»⁶⁸:

Վիշապ-ղիվական բնավորություն ունի նաև Երվանդ Վերջինը, որի մասին վկայված է. «Բայց ասեն զԵրուանդայ՝ ըստ հմայից զժնէայ զոլ ական հայեցուածով. վասն որոյ ընդ այգանալ աշալրջացն սովորութիւն ունել սպասաւորացն արքունի՝ վէմս որձաքարեայս ունել ընդդէմ Երուանդայ և ի հայեցուածոցն զժնութենէ ական պայթել որձաքար վիմացն: Բայց այս կամ եղիցի սուտ և առասպել, և կամ զիական ինչ ուր իւր ունել զօրութիւն...»⁶⁹:

Մենք տարբեր առիթ ենք ունեցել ընդդէմու Տիգրան Երվանդյանի վիշապալին բնավորությունը, հենվելով նաև նրա թոռան՝ Վահագն Վիշապարաղի մասին եղած հանրահայտ տվյալների վրա⁷⁰: Այժմ հիշումի, ամբողջանում է այդ պատկերացումը Երվանդունիների տոհմի վերաբերյալ, համոզելով, որ հայ ղիցաբանությունից վիշապային ղիծը չպիտի օտարվի: Ընդհակառակը, այն պետք է ավելի մանրամասն հետազոտվի, մանավանդ որ Երվանդունիների միջոցով այդ պատկերացումը գնում է կամրջվելու հայոց նախնիների հնազույն ժամանակների համապատասխան պատկերացումների հետ, ընդհուպ մինչև վիշապ քարակոթողները և ավելի հեռուն:

Այս բոլորը, բացահայտելով Երվանդունի տոհմի առասպելական բնույթը, թույլ է տալիս մոտավորապես ճանաչելու Երվանդ I-ի ղիցաբանական կերպարը և համոզվելու, որ նրա «Սակաւակեաց» մականունը պիտի կապված լիներ քաջքերի կողմից նրան «ի ղետս և ի մոայլս» համիշտակելու արույցի հետ:

65 Ղ. Ալիշան, Հին հուստք, Վենետիկ, 1910, էջ 209:

66 Մովսէս Խորենացի, էջ 173:

67 Մխիթար Այրիվանցի, Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 42:

68 «Քարթլիս Յխովրեբայ», Թբիլիսի, 1953, էջ 49:

69 Մովսէս Խորենացի, էջ 167:

70 Մանրամասնություններ տես «Բանբեր երեանի համալսարանի», 1972, № 1, էջ 64—81:

Համապատասխան պատկերացումներ պիտի եղած լինեին նաև Վարդգես Մանկան վերաբերյալ, որովհետև նա ևս պատկանում էր նույն ժամանակներին և ընդգրկված էր նույն պատմական միջավայրի մեջ։ Եվ եթե նաև կարողացել է հեռուններից գալով իջնել արքայանիստ Արտիմեդի առջև և «կռել կռվել զդուռնն Երուանդայ արքայի», նշանակում է նա ևս, բոլոր պայմաններին, պիտի օժտված լիներ առասպելական բնավորությամբ։ Հիրավի, պահպանված բանահյուսական կցկտուր փշրանքների միջից անգամ որոշակի երևում են։ Երվանդ Սակավակյացի քրոջ ամուսնու դիցաբանական մի քանի դժերը։ Այսպես, նա «Վարդգէս» (վարդ + գէս) է, այսինքն, ունի վարդավարսեր։ Վարդ բառն այստեղ վարգագույն է նշանակում⁷¹։ Ուստի վարդադույն ասելով պիտի հասկանալ «ոսկեհեր», հրագույն, հրեղեն, ինչպես Վահանի մասին է ասված. «Նա հուր հեր ուներ», «Բոց ուներ մօրուս»⁷²։ Վարսերի հատկանիշով են բնութագրվել նաև Գիսանեն⁷³, Տիգրան I-ը՝ «խարտեաշս այս և աղբբկ ծայրիւ հերաց Երուանդեանս Տիգրան»⁷⁴ և ուրիշ դուցադուռներ։ Հիշենք նաև, որ «վարդ»-ն առանձին նշանակում է «փառքն ավելացած» կամ «կրոնն աճեցնող»⁷⁵։

Վարդգեսը նաև Մանուկ է, այսինքն կտրիճ, հերոս, քաջ երիտասարդ։ Այդպիսի Մանուկներ շատ կան մեր գրականության անցյալի էջերում։ Հիշենք «Մասնա ծներում» հանդես եկող Խոր Մանուկներին (Խոր Մանուկ, Խոր Մանուկ՝ որդի Մհերի, Խոր Մանուկ՝ Վանից, Խոր Մանուկ՝ վահլեան, Խոր Մանուկ՝ Քեռի Թորոսի որդին)⁷⁶։ Միջնադարյան պոեզիայից հիշենք Ֆարման Մանուկին, որին մի ամբողջ պոեմ է նվիրված⁷⁷։ Հին դրույցներում ու երգերում մեծ տարածում ունեն Աղեկ Մանուկ կոչված հերոսները⁷⁸։ Անհամեմատ մեծ տարածում են ունեցել Թուխ Մանուկները՝ ինչպես սրբերի շարքում⁷⁹, այնպես էլ միջնադարյան ժողովրդական երգերում⁸⁰։ Այս բոլորի հետ իրական կյանքից ու կենցաղից կապված են եղել երիտասարդական միությունները կամ կտրճվորաց եղբայրությունները, որոնք հին ժամանակներից զալով, միջնադարում նոր իմաստ ու կերպարանք էին ստանում։ Այդ եղբայրությունների կամ միությունների ղեկավարներն էլ իրենց հերթին էին կոչվում Մանկտավազ, այսինքն՝ մանուկների ավագ⁸¹։ Հենում համապատասխան կաղմավորումների մեջ էին դաստիարակվում և ապա կլանք մշտնում բանիմաց, կտրիճ, քաջ, ուժեղ ու առողջ մանուկ-երիտասարդներ։

71 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, Երևան, 1962, կա նաև «Վարդագույն» անուն՝ վկայված 887 թ. (նույն տեղում)։

72 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 86։

73 Մ. Ա բ ե ղ յ ա ն, Երկեր, հատ. Ա, էջ 298—300։

74 Մ ո վ ս ե ս Խ ո Ր Ե ն ա ց ի, էջ 72։

75 Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հատ. Ե, էջ 69։

76 «Մասնա Ծներ», հատ. Բ, մասն Բ, Երևան, 1951, էջ 919։

77 «Պատմութիւն Ֆարման Մանկան», աշխատասիրությամբ Շ. Նազարյանի, Երևան, 1957։

78 Ղ. Ա լ ի շ ա ն, Հին հայաստան, էջ 222։

79 Թ. Թ ո Ր ա մ ա ն յ ա ն, Հայկական ճարտարապետություն, հատ. Բ, Երևան, 1948, էջ 222—223։

80 Ա. ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 113—116, 134—135, 141—149, 152—155։

81 Կ ո ս տ ա ն դ ի ն Ե Ր Վ ն կ ա ց ի, Տաղեր, աշխատասիրությամբ Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 21—29։

Մանուկ բառի քաջ, կտրիճ, հերոս առումն այնքան տարածված էր, որ ներսևս Շնորհալին մի ուրիշ հայ կտրիճի՝ Վարազդատին նվիրած հանկուկի մեջ գրում է.

Մանուկ մի այլ ի յայս նման
էր ի յագգէն Արշակունեան,
Հունչաք մանուկ էր ու իշխան,
Ընդ նորատ վազկաց քայլ մի լրման⁸²:

Միջնադարյան ու հին Մանուկների մասին տուրքնապես շատ դուր կա հայրենիների շարքերում: Այդ երգերի միջավայրն ամբողջապես կարծես «մանկական» է, երիտասարդական, կտրճական: «Մանուկ այն մանկանն ասեմ, որ զմանկան կինն սիրէ ոչ»⁸³, ասում է հայրեններից մեկը», «Մանուկ այն մանկանն ասեմ... թե ապրի՝ նայ անուն հանէ», կարդում ենք մի ուրիշ հայրենում⁸⁴: «Մանուկ մի Հոռմանց տանէն»... հայրենը նվիրված է հնից եկող մի հերոսի, որը հետո նույնացվել է Քրիստոսի հետ⁸⁵: Պահպանվել է մի ուրիշ հայրեն՝ «Այ, իմ աստուածատուր, ա՛յ, կտրիճ» սկզբնատողով, որի կտրիճ-հերոսը փեսացու է և ծնվել ու սնվել է բնության գրկում, կենդանական աշխարհում⁸⁶: Դրանք բոլոր էություն, Վարդգես Մանկան երկվորյակներն են:

Ահա հատուկ ուսումնասիրության կարոտ այս «Մանուկ»-ների ազգագրական բնտանիքի ներկայացուցիչներից մեկն է Վարդգես Մանուկը, որին նվիրված երգն էլ սկզբի մասում ունի հայրենային տաղաչափություն և ներկայանում է որպես հայրենների հնագույն նախանմուշ.

Հատուած դնացեալ Վարդգէս,
Մանուկն ի Տուհաց գաւառէն.
ԶՔասաղ գետով եկեալ,
Նստաւ զՇրէշ բլրով...

Պարզ է, որ այսպիսի հերոսը պիտի պատշաճ փեսացու համարվեր Երվանդ արքայի քրոջ համար և ներմուծվեր արքայական դիցաբանության մեջ. Շատ հավանական է, որ նա հատուկ տեղ ու դեր ունեցած լիներ նաև Տիգրան և Աթաղահակ վեպում, որովհետև նա հենց Տիգրանի հասակակիցն էր և ոչ թե երվանդի բայց ափսոս, որ փաստեր չեն պահպանվել:

Վերևում քննված հարցերի կապակցությամբ հատուկ նշանակություն է ստանում Վարդգես Մանկան հայրենիքի՝ «Տուհաց գաւառի» տեղի հարցը: Որոշումները այս ուղղությամբ ևս եղել են, հայտնվել են տարբեր կարծիքներ, որոնք ցարդ ի մի չեն բերված: Հիշենք կարևորները: Մ. Էմինը գրել է. «Որտեղից» եկավ Վարդգես Մանուկը, ո՞ւր է գտնվել Տուհաց գավառը և ի՞նչ

⁸² Ն եր ս ե ս Շ ն ո Ր հ ա լ ի, Բանբ չափաւ, Վենետիկ, 1830, էջ 583:

⁸³ Ա. Զ ո պ ա ն յ ա ն, Հայրենների քուրաստանը, Փարիզ, 1940, էջ 279:

⁸⁴ Նույն տեղում, էջ 164:

⁸⁵ Ա ս. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 268—271:

⁸⁶ Նույն տեղում. էջ 126—127:

ի նշանակում «կոնի կոփել զդուռնն Օրուանգայ արքայի», — հարցել, ևն, որոնց մենք հանձն չենք առնում պատասխանել»⁸⁷։

Գ. Խալաթյանցի փորձել է Տուհաց դավաոր կապել Բասենում գտնվող հու գյուղի հետ, որը հիշատակել են Ղազար Փարպեցին, Սեբեոսը և ուրիշները⁸⁸։ Քանի որ «Դու» անունը «Տուհ»-ից շատ է հեռու, ուստի առաջարկված ենթադրությունը մատնվել է մոռացության։ Հետադարձում ն. Ադոնցը, հրատարակելով Դիոնիսիոս Թրակացու բերականությունը և հայ բերականների մեկնաբանությունները, ուշադրություն հրավիրեց նրանց մոտ առկա «գոգերձական, տուհ, վրացի» վկայության վրա, նշելով լոկ այն, թե «Названия Сутъ встречается у Хоренского»⁸⁹։ Այս փաստին անմիջապես անդրադարձավ ն. Մառը⁹⁰։ Երկու հայաղետներն էլ իրավացիորեն կապ տեսան նշված «Տուհ»-ի և «Տուհաց գառա»-ի միջև։ Պիտի ասել, սակայն, որ նրանք վերոհիշյալ ակնարկներից հեռու չգնացին, իսկ «Տուհ»-ն էլ կապեցին վրացական միջավայրի հետ՝ չտալով բավարարող մեկնաբանություն։ Հետագայում այս կարծիքն էլ, որի հիմքում ընկած է հարցի լուծման բացակից, փաստորեն մատնվեց մոռացության։ Դրա փայլուն վկան է Ստ. Մալխասյանցի ծանոթությունը, թե «Տուհաց գավառը և Արտիմեղ բաղաբը այլուր հիշված չէ»⁹¹։ Մինչդեռ հիշված է՝ V դարի առաջին կեսի հեղինակ Դավիթ Քերականի մոտ, որը Դիոնիսիոս Թրակացու նշած «փոլուղացի» և «ղալատացի» անվանումները փոխարինել է «գոգերձական, տուհ, վրացի» հասկացություններով։ Համապատասխան նախադասությունը հետևյալն է. «Ազդական է, որ ազգի էլ յայտական, որպես գոգերձական, տուհ, վրացի»⁹²։

Այժմ կարելի է ավելացնել, որ այդ բացառիկ վկայությունը փոխանցվել է նաև ուրիշ մեկնությունների մեջ։ Այսպես, Վարդան Արեւելցու երկում, որպես մեկնաբանվող քաղվածք, մեջ է բերված նույն նախադասությունը. «Ազդական է՝ որ ազգի է յայտական, որպես՝ գոգերձական, տուհ, վրացի»⁹³։ Այն մեջ է բերված նաև Ծսայի նշեցու կողմից⁹⁴։

Այսպիսով, կարող ենք ասել, որ V դարի հեղինակներ Դավիթ Քերականին և Մովսես Խորենացուն հայտնի է եղել «տուհ» անունով ազգություն, որի անունով էլ դավաոր կոչվել է «Տուհաց»։ Մյուս կողմից էլ տարբեր ազգություններ համարված գոգերձականները և վրացիները, գտնվելով Արարատյան դաշտից հյուսիս, ցույց են տալիս նաև տուհաց ազգի կամ Տուհաց գավառի նույն կողմերում գտնվելը։ Այդտեղից եկող Վարդգես Մանուկը, Արտիմեղ հասնելու համար, իրոք, կարող էր ընտրած լինել Քասախ գետի ընթացքը։

Անկախ մանրամասնություններից անառարկելի է, որ Վարդգես Մանկան հայրենիքը հյուսիսային Հայաստանում է, իսկ նրա անունն ու մականունն էլ, իրենց միասնությամբ, հաղեցված են հայկականությամբ։

87 «История Армении Моисея Хоренского», М., 1858, էջ 303։

88 Գ. Խալաթյան, *Армянский эпос*, I, էջ 334։

89 Ն. Ադոնց, *Արուեստ Դիոնիսեայ բերականի*, Պետրոգրադ, 1915, էջ CLXXII։

90 «Христианский Восток», V, вып. I, Петроград, 1916, էջ 59—60։

91 Մովսես Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, Երևան, 1968, էջ 35։

92 Ն. Ադոնց, *Արուեստ Դիոնիսեայ բերականի...*, էջ 20։

93 Վարդան Արեւելցի, *Մեկնութիւն բերականին*, 1972, էջ 118։

94 Ծսայի նշեցի, *Վերլուծութիւն բերականին*, 1966, էջ 122։

Ամփոփենք: Վարդգես Մանկան մասին պահպանված բանահյուսական փշրանքը մասունք է ոչ թե Երվանդ Վերջին, այլ Երվանդ I արքային նվիրված հին էպոսից⁹⁵, Վերջինս հավանաբար եղել է Տիգրան I-ին նվիրված էպոսի ակզբի զրվագը: Երվանդ I-ը նստել է ոչ թե Վանում, այլ Արարատյան դաշտում, Արտիմեդ կոչված քաղաքում: Ըստ երևույթին, այս քաղաքը հետագայում ձուլվել է մ. թ. ա. 570—560-ական թթ.՝ իր հարևանությամբ կառուցված Վարգգեսավանին՝ ընդգրկվելով Վաղարշապատի պարիսպների մեջ: Երվանդունիների տոհմը, Երվանդ արքան, ինչպես նաև Վարգգես Մանուկը վնասված են եղել դիցաբանական շեշտված գծերով՝ կապված հին ժամանակներին հատուկ պատկերացումների հետ: Վարդգես Մանկան հայրենիքը՝ Տուհաց գավառը պիտի որոնել Հյուսիսային Հայաստանում:

ЗАМЕТКИ ОБ ЭПИЧЕСКОМ ОТРЫВКЕ О «ВАРДГЕСЕ МАНУКЕ»

Доктор историч. наук А. Ш. МНАЦАКАНЯН

(Р е з ю м е)

К сохранившемуся в «Истории» Мовсеса Хоренаци отрывку сказания о Вардгесе-мануке не раз обращались ученые, высказывая различные мнения. М. Чамчян, Г. Инджиджян, Н. Эмин, Г. Алишан и др. относили данный отрывок к VI в. до н. э. Другая группа ученых—М. Абегиан и его последователи — датировала отрывок III в. до н. э. В статье показывается, что правы были специалисты первой группы. Выясняется, что изучаемый отрывок является частью эпоса, посвященного Еруанду I, и первой частью эпоса, посвященного Тиграну I. Оба произведения составляли, видимо, единое целое и отражали исторические события эпохи династии Еруандидов начального периода. Рассматривается также вопрос о местоположении указанного в отрывке города Артимеда, бывшего столицей царя Еруанда I.

⁹⁵ Ս. Կրկյաշարյանը փորձել է Երվանդ I-ի դերում տեսնել Արտաշեսին («Պատմա-քանասիրական հանդես», 1973, № 4, էջ 179—186): Երվանդ I-ի մասին խորհնացու հաղորդած տվյալները չենք կարող դուրս մղել շրջանառությունից՝ այն էլ նույն խորհնացու օգնությամբ: Քերեա ճիշտ լինելը մտածել Արտաշեսի, Երվանդ I-ի և Տիգրան I-ի սերնդա-զահակալական առնչությունների մասին: Այս խնդիրը կարոտ է հատուկ քննության: